պանները եթէ կամենային, կարող էին աւելի լոյս տալ իրանց կրպակներին: Բայց այդ շահաւէտ չէր լինի նրանց համար, որովհետեւ խաւարի ու մթութեան մէջ աւելի հեշտ էր խաբել, աւելի հեշտ էր վատ ապրանքը լաւի տեղ վաճառել:

Իմ գլխում ծագեց մի համեմատութիւն: Միթէ՞ աւետարանի լոյսն ու ճշմարտութիւնը քարոզող միսիոնարները նոյնպիսի վաճառականներ չէին: Միթէ՞ նրանք եւս իրանց դպրոցները խաւարի մէջ չէին պահում, ինչպէս բաղեշցի վաճառականը՝ իր կրպակը: Միթէ՞ նրանք եւս իրանց առեւտուրը մթութեան մէջ չէին կատարում, որ աւելի հեշտ լինի խաբել: Միթէ՞, եթէ ցանկանային նրանք, չէին կարող աւելի լոյս տալ իրանց դպրոցներին, այն աստուածային կենսատու լոյսը, որի տարածման համար առաքուած էին:

Ամէն տեղ ես լսում էի նոյն վիճաբանութիւնները, կարծես, ամբողջ քաղաքը վարակուած լինէր այդ ախտով: Խարդախ վաճառականութեան հետ կատարւում էր եւ կրօնական խարդախ պրոպագանդա: Իսկ հայ քահանան վերեւում, կտուրների վրայ, զանազան ուտեստների «նմուշներ» էր հաւաքում իր թաշկինակի մէջ...

Ես զզոանքով դուրս եկայ չարշիներից:

Բաղէշը գտնւում է չորս վանքերի հոգեւոր պաշտպանութեան ներքոյ: Նրանցից մէկը քաղաքի միջումն է, իսկ երեքը՝ նրա շրջակայքում: Ամլորդու վանքը գտնւում է նոյնանուն թաղի մէջ: Նրանից կէս ժամ հեռաւորութեան վրայ կանգնած է Գոմաց ս. Աստուածածնի վանքը, յետոյ Աւեխու ս. Աստուածածնի վանքը եւ Խնդրակատար ս. Աստուածածնի վանքը: Թադէոս առաքեալը ուխտել էր Հայաստանում հազար վանքեր հիմնել ս. Աստուածածնի անունով. յիշեալ երեքը միայն Բաղէշի մօտակայքում հիմնեց:

Բացի չորս վանքերից, չորս հոյակապ եկեղեցիներ քաղաքի մէջ հոգեւոր սնունդ են մատակարարում բնակիչներին: Կարմրակ կոչուած եկեղեցին պահում է իր մէջ Յիսուս Քրիստոսի արեան շիթը. նա այն աստիճան պաշտելի է, որ նրա անունով երդւում են մինչեւ անգամ մահմեդականները: Այդքան հոգեւոր հիմնարկութիւններից յետոյ հաջի Իսադը դարձեալ փողոցներում կրօնափոխութիւն է քարոզում: Ի՞նչ է դրա պատճառը...

Փողոցներում շրջում էին հայ կանայք: Ամէնքը, թէ պառաւ եւ թէ մանկահասակ, իրանց գեղեցիկ եւ նուրբ կերպասներից կարուած զգեստների վրայ հագած ունէին մի տգեղ, մինչեւ ոտները իջած շիլայ շապիկ: Այդ արտաքին ծածկոցը նրա համար էր, որ նրանց նազելիութիւնը չգրաւէ մուսուլմանի վաւաշոտ հայեացքը: Տղամարդիկ նոյնպէս վատ էին հագնուած: Այս-